

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 11/11

Քաղ. Երևան

23 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա. Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. մարտի 23-ի նիստում (արձանագրություն3/3) քննարկման էր ներկայացրել «Արարատի կոնյակի գործարան» Ա.Կ.Ձ. ՍՊԸ-ի կողմից 2010թ. նոյեմբերի 29-ին «ԼԵԳԵՆԴԱ ՈՒՐԱՐՏՈՒ» (հայտի համարը N 2010821) համակցված ապրանքային նշանի փորձաքննության դեմ բողոքը:

Հիշյալ ապրանքային նշանի վերաբերյալ քննարկումները 2011 թվականի հունվարի 26-ի և փետրվարի 25-ի նիստերում հետաձգվել էին բողոքարկողի խնդրանքով, քանի որ բողոքարկողը նշել է, որ ապրանքային նշանի վերաբերյալ դեռևս տարվում են բանակցություններ:

Մերժման հիմքում նշված է, որ համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի հայտարկված ապրանքային նշանը 33-րդ դասի համար ենթակա չէ գրանցման, քանի որ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցված «ՈՒՐԱՐՏՈՒ» (ռուս.) և «ՈՒՐԱՐՏՈՒ» («Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ԲԲԸ, Եղվարդ, Չարենցի 1) N 13836, 5838 ապրանքային նշաններին: Տվյալ դեպքում գրանցված նշանների հիմնական «ՈՒՐԱՐՏՈՒ» բառը ներառված է հայտարկված համակցված նշանի բառային մասի մեջ: Բացի այդ նշանները իմաստային նմանություն ունեն, որը պայմանավորված է նրանց մեջ առկա «ՈՒՐԱՐՏՈՒ» համընկնող տարրով, որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը:

Բողոքարկողը իր բողոքում խնդրել է վերանայել փորձաքննության որոշումը ապրանքային նշանի մասնակի գրանցման մասին, քանի որ գտնում է, որ «ՈՒՐԱՐՏՈՒ» և «ԼԵԳԵՆԴԱ ՈՒՐԱՐՏՈՒ» ապրանքային նշանները չեն կարող սպառողին մոլորության մեջ գցել,

քանի որ արտահայտում են տարբեր իմաստներ, առաջինը արտահայտում տեղանուն, իսկ երկրորդը ունի նկարագրական իմաստ, բացի այդ «ՈՒՐԱՐՏՈՒ» բառը և «ԼԵԳԵՆԴԱ ՈՒՐԱՐՏՈՒ» արտահայտությունը հնչյունային առումով տարբերվում են:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ կոլեգիան քննել է բողոքը և գտնում է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն նշված երկու նշանները շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետությունում առկա «ՈՒՐԱՐՏՈՒ» ռուսերեն և հայերեն գրանցումներին և ճիշտ է համարում փորձաքննության բաժնի կողմից կայացրած որոշումը:

Բողոքարկման խորհրդի քննարկման ընթացքում խորհրդի մյուս անդամները համամիտ էին կոլեգիայի կարծիքի հետ:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «ԼԵԳԵՆԴԱ ՈՒՐԱՐՏՈՒ» (հայտի համարը N 2010821) ապրանքային նշանի վերաբերյալ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան